28.03.2025թ.

N 2803Մ

ՀՀ Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավար
պարոն Զ. Մանուկյանին

Հարգելի պարոն Մանուկյան,

Սույն գրությամբ ծանուցում ենք, որ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրում նախատեսվում է կառուցել 288 աշակերտի համար նախատեսված դպրոց:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի, նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և փորձաքննության, որի շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել հանրային լսումներ:

ՀՀ կառավարության 2014թ-ի N 1325-Ն որոշման՝ 2023թ-ի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ խմբագրված հավելվածի 2-րդ գլխի 13-րդ կետի պահանջին համապատասխան ստորև ներկայացվում է ծանուցման համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ առաջին հանրային լսումները կազմակերպելու նպատակով.

1. **Նախաձեռնողի անվանումը և գտնվելու վայրը.**

   «Լուք» ՍՊԸ, հասցե՝ ք.Երևան, Բաղրամյան 23 շենք, 26 բն.

2. **Նախատեսվող գործունեության անվանումը՝ օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, նպատակը, համառոտ նկարագիրը.**

Նախատեսվող գործունեությամբ նախատեսվում է դպրոցի կառուցում՝ Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրում:

Նախատեսվող գործունեության անվանումն է «ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի դպրոցի կառուցում»:

Սույն տեղեկատվության ծավալը և համառոտ նկարագրի պահանջը սահմանված է ՀՀ կառավարության 2014թ-ի N 1325-Ն որոշման՝ 2023թ-ի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ խմբագրված հավելվածի 2-րդ գլխի 13-րդ կետով: Կառուցապատման մանրամասն տեխնիկատնտեսական ցուցանիշները, նախագծային լուծումները և շրջակա միջավայրի ազդեցության գնահատման հաշվետվությունը կներկայացվեն ծրագրի իրականացման հետագա փուլերում՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով:

3. Նախատեսվող գործունեության իրականացման վայրը:

Նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի վարչական տարածքում:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք հինգ աշխատանքային օրվա ընթացքում ձեռնարկել ՀՀ կառավարության 2014թ-ի N 1325-Ն որոշման՝ 2023թ-ի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ խմբագրված հավելվածի 2-րդ գլխի 14-րդ մասով սահմանված գործողությունները, որի շրջանակներում հայտնում ենք մեր պատրաստակամությունը՝ համագործակցելու և ցուցաբերելու մասնագիտական, տեխնիկական և մեթոդական աջակցություն:

Տնօրեն՝ Տ. Առաքելյան